

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԹՐԱԿԱՑՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆՋԻ ԵՎ ՄԵԿՆԻՋԻ ՀԱՐՑԸ

Բանասիր. գիտ. քեկնածու Ա. Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» երկի հայ թարգմանչի և նրա ժամանակի հարցը սերտորեն առնչվում է հունաբան դպրոցի սկզբնավորման և այս ուղղության այլ թարգմանությունների ժամանակագրության ու նրանց թարգմանչի հարցերի պարզաբանման հետ: Դրանց հաջող լուծումը վճռական նշանակություն ունի հատկապես Դավիթ Անհաղթի ժամանակի և նրա գրական ժառանգության կնճռոտ հարցերի պարզաբանման, նաև՝ հունաբան դպրոցի «լուսաբանված» համարված, կամ մինչև այժմ «առեղծվածացին» թվացող մի շարք պրոբլեմների ճիշտ մեկնաբանման համար:

Հունաբան դպրոցի հիմնադիրներն են համարվում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի «կրտսեր աշակերտներից» շատերը, որոնք հունական գիտական կենտրոններում հունարեն լեզվին, գիտության և թարգմանական արվեստին տիրապետելուց հետո եռանդուն կերպով սկսեցին զբաղվել գիտական թարգմանություններով: Ն. Ադոնցն իր «Արուեստ Դիոնիսիոս քերականի և հայ մեկնութիւնք նորին» աշխատության մեջ գրում է. «Քերականական գրականությունը հունաբան դպրոցի մեջ բավական պայծառ շերտ է գրավում: Շնորհիվ է նույնիսկ, որ առաջին քերականներն էլ անվանած դպրոցի հիմնադիրներն էին»¹: Հ. Մանանդյանը իր «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ հունաբան դպրոցի հնագույն թարգմանություններ է համարում Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, Փիլոնի երկերը և Պիտոյից գիրքը²: Այս աշխատություններից էլ, ըստ Հ. Մանանդյանի, Թրակացու «Քերականությունն» իր լեզվական առանձնահատկություններով նախորդել է մյուսներին: «Այս կենթադրությունը,— գրում է նա,— որ ամենակարևոր նշանակություն ունի հունաբան թարգմանությունների ժամանակագրության համար, ավելի քան հավանական եմ համարում, հիմնվելով լեզվական հետևյալ նկատառումների վրա»³: Հետևաբար, անառարկելի է, որ Թրակացու «Քերականությունը» հունաբան դպրոցի առաջին թարգմանություններից մեկն է, եթե ոչ հնագույնը:

Ըստ մատենագրական տեղեկությունների, Թրակացու «Քերականության» թարգմանիչ է համարվում Դավիթ Փիլիսոփան, որին վերագրվում է նաև նույն քերականության հնագույն մեկնությունը: Այս կարծիքը դեռևս մեկնիչներից է գալիս:

¹ II. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ IV:

² Տե՛ս Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 116:

Ն. Ադոնցն իր վերոհիշյալ արժեքավոր աշխատության մեջ մեծ բարեխղճությամբ հավաքել ու մանրամասնորեն ուսումնասիրել է Վենետիկի, Վիեննայի և էջմիածնի մատենադարանների ձեռագրերում Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հայ մեկնիչների, հատկապես Դավիթ Անհաղթի և Մովսես Խորենացու մասին պահպանված բոլոր վկայությունները։ Դրանց մեջ Թրակացու «Քերականության» հայերեն թարգմանության և մեկնությունների մասին հաղորդվում են մի շարք տեղեկություններ, որոնցից առավել մանրամասն ու հետաքրքրական են Առաքել Սյունեցու բերած տեղեկությունները։ Սյունեցին, որը եղել է հայտնի քերթող, հռետոր և իմաստասեր, խորապես գիտե Դավիթ Անհաղթի գործերը։ Ի թիվս այլ աշխատությունների, նա գրել է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» երկի մասին «Մեկնութիւն կամ համառօտ լուծմունք» և Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մասին՝ «Համառօտ լուծմունք» կամ «Մեկնութիւն քերականին», որի առաջաբանում այդ քերականության հայերեն թարգմանության և մեկնությունների մասին տալիս է հետևյալ բացատրությունները. «Թէ յումմէ թարգմանեցաւ և ով էր որ մեկնութիւն արար սորա. այսինքն, Զի Դաւիթ փիլիսոփայն թարգմանեաց և մեկնեաց զսա(յ)։ Իսկ յետ սորա Գրիգոր Մագիստրոսն այլ ընդ(յ)արձակ մեկնեաց զԴաւթի մեկնեալն։ Իսկ յետոյ Յոհաննէս վարդապետն մականուն Պլուզ համառօտեսց զնոյն վասն դիւրալուր լինելոյ։ Եւ յետ նորա Եսայի վարդապետն Գալլիձորոյ այլ համառօտեաց զնոյն, որ այժմս կայ ի միջի։ Սոյնպէս եւ Ծործորեցին է համառօտեալ։ Արդ երկու մեկնիչ կայ ի գիրքս այս։ Առաջին Դաւթի մեկնածն է։ Եւ երկրորդն Ստեփաննոսի Սիւնեաց, որ ի վայոց ձորն նահատակեցաւ»⁴։

Ն. Ադոնցը, վերլուծելով Առաքել Սյունեցու վերոհիշյալ մեկնության աղբյուրները, գրում է. «<Դիոնիսիոսի>, Մագիստրոսի, Հովհաննեսի (Երզնկացու—Ա. Մ.) և Եսայու քերականությունների մասին ունեցած տեղեկություններով Առաքելը պարտական է նրանց գործերի անձնական ծանոթությանը։ Ինչ վերաբերում է Դավթին և Ստեփանոսին, ապա նրանց մասին նա գիտե, ամենից ավելի հավանական է, Հովհաննես Երզնկացուց. հնարավոր է, որ նրա ձեռքի տակ եղել են և այլ փաստաթղթեր, որտեղից առնված է Դիոնիսիոսի քերականության՝ Դավթի կողմից թարգմանված լինելու տեղեկությունը։ Որ այդ նրա կողմից պարզ կռահում չէ, այլ հիմնվում է մի որևէ աղբյուրի վրա, երևում է նաև նրանից, որ այդ նույն Առաքելը Դավթի «Սահմանաց գրքի» մեկնության մեջ հաղորդում է, որ Դավիթը հաջողություն չունեցավ հայերի մեջ, որոնք «անարգեցին գնա և զբանս նորա. եւ հարեալ վիրաւորեցին՝ զնա. և նա գնացեալ ի Վիրս և անդ կացեալ վախճանեցաւ»⁵։ Դավթի կյանքից այս չափազանց հետաքրքրական տեղեկությունը,— շարունակում է Ն. Ադոնցը,— անժանոթ է ուրիշ աղբյուրներից և անվիճելիորեն ցույց է տալիս, որ Առաքելը իր տրամադրության տակ ունեցել է շատ լավ փաստաթուղթ։ Դավթի և Ստեփանոսի իսկական գործերը՝ Դիոնիսիոսի նրանց մեկնությունները Առաքելը ձեռքի տակ չի ունեցել. նրա տեղեկությունները զուտ գրական բնույթ ունեն»⁶։

⁴ Н. Адопц, нշվ. աշխ., էջ CXV։

⁵ Գ. Զարրհանեան, Հայկական հին դպրութիւն (Դ—ԺԳ), Վենետիկ, 1897, էջ 322։

⁶ Н. Адопц, нշվ. աշխ., էջ CXVI։

Թրակացու քերականության հայ թարգմանչի մասին վերոհիշյալ կարծիքը հաստատում են նաև «Նոր հայկազյան բառգրքի» հեղինակները, որոնք Թրակ. բեռ. համառոտագրությունը բացատրում են այսպես. «Յունական հին քերականություն Դիոնեսիոսի Թրակացու, թարգմանեալ՝ որպէս ասի, ի Դաւթէ անյաղթէ՝ ամենայն սարօք հելլենաբանութեան, և դուն ուրեք յարմարեալ հայկական բարբառոյ»⁷։ Ա. Սուբրյանը, խոսելով կրտսեր թարգմանիչների մասին, առավել հավանական է գտնում այս երկի թարգմանիչ համարել Դավիթ Անհաղթին։ «Ասոնք,— գրում է նա,— հարկաւ բաց ի ծանօթ երկասիրութեանց դոր ունինք այսօր ի մեզ, շարադրած պիտի ըլլան կամ թարգմանած ուրիշ մատեաններ ալ, որ մեզի անյիշատակ մնացեր են։ Այսպիսի երկասիրութիւն մը յորում յանուանէ կը յիշուին Մովսէս և Դաւիթ, հասած է մինչև առ մեզ և է բաղմահուակ Քերականութիւնն...։ Մեր մէջ յիշեալ է անոր (Դիոնեսիոս Թրակացու) հայ թարգմանութիւնն, որ հաւանօրէն կամ Մովսէսի հորենացու է և կամ Դաւթի անյաղթի...։ Դիոնեսեայ քերականութեան երբեմն ի մերոց նաև Դաւթի Անյաղթի անունն տրուած է։ Միով բանիւ հարկ է ընդունինք, որ այս անձանցմէ մէկն ըլլա թարգմանն, և աւելի Դաւիթ Անյաղթ, որուն դրուածոց մէջ ալ կ'երևին տեղտեղ այս քերականութեան հետքերն, դոր վերջը պիտի տեսնենք»⁸։ Նույն կարծիքն է հայտնում նաև Գ. Զարբհանալյանը⁹։

Թարգմանչի անձնավորության հարցով հետազոտում ղեկավար են Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Գ. Զահուկյանը։ Ուսումնասիրության ընթացքում Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի կարծիքների քննության առիթով կաշխատենք ցույց տալ, որ լեզվական բաղմամբիվ համեմատությունների շնորհիվ հաստատվում է թարգմանչի և Դավիթ Փիլիսոփայի «Մեկնության» հեղինակի նույն անձնավորությունը լինելը։

Ըստ մատենագրական տեղեկությունների. Դավիթ Անհաղթը գրել է նաև Դիոնեսիոս Թրակացու «Քերականության» մասին՝ «Մեկնութիւն քերականին»։ Ն. Ադոնցը իր աշխատության առաջին զլխում բերում է ձեռագրական մի շարք վկայություններ, որոնց մեջ Դավիթ Անհաղթին և Մովսէս հորենացուն վերագրվում են քերականական մեկնություններ։ Բերենք միայն Դավիթ Անհաղթին վերաբերող ձեռագրական մի քանի տվյալներ։ «Սահմանաց գրոց» Պատմառի մեջ կարդում ենք. «Բայց յոյնք ասեն է գիրք ունել զԴաւիթ եւ յիւրեանց աղգէ ասեն զնա. այլ յայտնի է աղգական եւ աշակերտ է Մովսէսի քերթողի եւ առ մեզ են սորա գիրք դ. ա. բարձրացուցէք, բ. սահմանաց, գ. պէտքն, դ. մեկնութիւն բերականին»¹⁰։

«Սահմանք իմաստասիրութեան» երկի մեկ այլ գրչադրում վկայվում է. «Ասաց սա շորս գիրքն. առաջին՝ ղԲարձրացուցէքն, երկրորդ՝ ղՍահմանացն, Երրորդ՝ ղՔերականին մեկնիչն, չորրորդ ղՊէտքն, դոն եւ առանձինն այլ ճատեր»¹¹։ Ն. Ադոնցը առավել հետաքրքրական է համարում «Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դաւթի Հարցմունք ըստ երկաբնական» պատմա-

⁷ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 12։

⁸ Ա. Սուբրյան, Սկիզբն հայկական լեզուի և Դիոնեսիոսի Թրակացու քերականութիւն, «Բաղմամբ», 1877, էջ 104—105։

⁹ Գ. Զարբհանալյան, Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց (Դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 395։

¹⁰ II. Адо́нц, նշվ. աշխ., էջ XVII։

¹¹ Նույն տեղում, էջ XXXIII։

դրույցի տեղեկությունները: Այս ձեռագրում հաղորդվում է. «Եւ խնդրեցին ի Մովսիսէ գրով տալ նոցա զպատմութիւն հայոց: Իսկ նա սկսեալ գրէր զպատմութեան հայոց պատմագիրն եւ այլ բազում ինչ արար քննութիւն պէս պէս ճառեալ ի տնօրինութիւն փրկչին եւ բազում ինչ, արար եւ օքերականին մեննութիւն. եւ արարին եւ զեղսնակս երաժշտականացն ձայնաւորս բազումս ի պէտս եկեղեցւոյ: Այլ վասն խօսից վարդապետութեանց ոչ էր առ ուրեք վասն դառն ժամանակին: Եւ Դաւիթ (գրեաց) զՍահմանացն գիրսն. զոր էր առեալ ի փիլիսոփայիցն. արար եւ զմեկնութիւն փերականին»¹²:

Ն. Ադոնցը թեեւ այս ավանդության տեղեկությունները առասպել է համարում, սակայն աշխատում է նաեւ քննադատաբար բացատրել դրանք: Նա նկատում է, որ այդ տեղեկությունները բաղկացած են տարբեր մասերից, որոնք պատկերում են անվանված հայրերի կյանքից զանազան դրվագներ: «Հարցմունքում» Դավիթը կոչվում է Անհաղթ փիլիսոփա, Մովսեսը՝ քերթողահայր, Մամբրենը՝ վերծանող, Աբրահամը՝ հռետոր, և Պողոսը՝ նրանց նմանակից: Այս կոչումները վկայում են քերթողական արվեստի մեջ նրանց վայելած փառքի կամ հմտության մասին: Նրանք կրթություն են ստացել հունական գիտական կենտրոններում և երկար ժամանակ այնտեղ մնալով, «տեսքով ու լեզվով դարձել են աթենացիներ», մի դիտողություն,— գրում է Ն. Ադոնցը,— որը գեղեցիկ կերպով բնութագրում է հունաբան դպրոցի հեղինակների հունարեն լեզվով հրապուրվելը: Ավանդության տեղեկությունները, ըստ Ն. Ադոնցի, նախապես գոյություն են ունեցել հավանաբար առանձին. հետագայում է, որ դրանք ի մի են բերվել որպես մեկ ամբողջություն: Որոշ նշաններ ակնհայտորեն ցույց են տալիս, որ գոյություն են ունեցել «Հարցմունքի» զանազան տարբերակներ, և նկատելի են նույնիսկ հակասությունների սուր անկյունները հարթելու փորձեր¹³: Այդ նկատառումով Ն. Ադոնցը բերում է կրտսեր թարգմանիչների մասին ավանդության տեղեկությունները և ավելացնում, որ «եւ ոչ ժամանեցին ելանել ի խաղաղական ժամանակի, զի զառլցեալ եւ զամբարեալ զգանձն զայն, որ ի վաղ ժամանակաց ի յամանի պահեալ ունէին, զոր եւ ընդ իւրեանս տաբան առ տուողն պարգեւացն եւ ննջեցին բարեօք ի Քրիստոս»¹⁴ նախադասությունը չի նշանակում իհարկե, թե նրանք ոչինչ չգրեցին, այլ չկարողացան իրենց դրսևորել ստացած պատրաստության համապատասխան: Այնուամենայնիվ նրանք հասցրեցին գրել և մեզ գրական որոշ ժառանգություն թողնել¹⁵:

Ն. Ադոնցը բերում է նաեւ ձեռագրերում Դավիթ Անհաղթին վերագրվող «Սկիզբն եւ պատճառ քերականին Դաւիթ փիլիսոփայի» գրությունը. «Քերականութեան արուեստ յարտաքնոցն է...: Եւ սկիզբն է սորա այսպէս. քերականութիւն է հմտութիւն ի բուն իմաստնոցն յայտնեալ եւ շարադրեալ. եւ սորա մասունք են զ...»¹⁶:

12 Գ. Սրվաճատեանց, Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի, Կ. Պոլիս, 1874: Նույնը՝ «Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի Հարցմունք ըստ երկարնակացն», «Արարատ», 1879, ապր.-մայիս: Նույնը՝ «Հանդէս Ամսօրեայ», 1903, Н. Адопц, նշվ. աշխ., էջ LXXV, ծան.:

13 Н. Адопц, նշվ. աշխ., էջ LXXIV—LXXV:

14 Նույն տեղում, էջ LXXV:

15 Նույն տեղում, էջ LXXV—LXXVI:

16 Նույն տեղում, էջ XXXIV:

Ինչպես տեսանք, Ն. Ադոնցը կարևոր նշանակություն է տալիս Առաքել Սյունեցու տեղեկություններին: Սյունեցին իր «Մեկնութիւն սահմանացն գրոց Դաւթի Անյաղթի» աշխատության մեջ Անհաղթի մյուս գործերի մասին հաղորդում է. «(Դաւթ) գրեաց նախ զՍահմանքս, երկրորդ զԲարձրացուցէքն, երրորդ զՊէտքն, շորրորդ զՄեկնութիւն քերականի, հինգերորդ զՄեկնութիւն Պորփիրի և զԱրիստոտէլին»¹⁷:

Նշված և ձեռագրական այլ տեղեկությունների հիման վրա Ն. Ադոնցը եղբակացնում է. «Անվիճելի է, որ մեզ հետաքրքրող հարցի՝ քերականության աշխատության վերաբերյալ երկու հեղինակները՝ Դավթը և Մովսեսը գրել են քերականության մեկնություններ: Այդ ցուցմունքը Դավթի վերաբերյալ հաստատվում է նաև վերոհիշյալ «Սկիզբն եւ պատճառ քերականին Դաւթի փիլիսոփայի» հոգվածով, որից երևում է, որ Դավթի սնունով ճանաչվել է քերականական մի աշխատություն»¹⁸:

Ն. Ադոնցը նկատում է, որ «Դավթի և Մովսեսի անունները հայ գրականության մեջ եղել են ճակատագրական: Նրանց շուրջ անորոշության մի այնպիսի մառախուղ է կուտակվել, որ հորինվածքների ծալքերում ճշմարտությունը հայտնաբերելը առ այսօր մնում է հայագիտության ամենադժվարին ու ամենակարևոր խնդիրներից մեկը»¹⁹:

Ձեռագրական տեղեկություններից անցնելով պատմիչներին, Ադոնցը նշում է, որ Ստեփանոս Ասողիկը առաջինն է իր «Պատմության» մեջ հիշատակում նախորդ քերականներին, գիտե նաև Մամբրեին: «Յայսմ ժամանակի,— գրում է Ասողիկը,— (յաւուրս մարդպանութեան Վահանայ, 485—500) Մամբրէ, եղբայր Մովսիսի, զորմէ ասեն երրորդ գտեալ ի փիլիսոփայս՝ դսուհար ի Հայս, եւ Դաւիթ, աշակերտ Մովսիսի, ի Հարք գաւառէ, ի Հերեան գեղջէ»²⁰: Այնուհետև Սամվել Անեցին իր «Հաւաքմունքի»²¹, Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութեան»²² մեջ հիշատակում են Մովսես խորենացուն ու Ստեփանոս Սյունեցուն, որոնք ի թիվս այլ աշխատությունների գրել են նաև «Մեկնութիւն քերականին»: «Եւ Մովսէս խորենացին ասէ ի մեկնութեան քերականին. սուրբ հոգին առինչունակ է... եւ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն ասէ. քանզի բղիւ է հօրէ իբր յականէ...»²³:

Ըստ Ն. Ադոնցի, Դավթի, Մովսեսի, Ստեփանոսի՝ քերականական աշխատություններ գրած լինելու մասին տեղեկությունները ամրապնդվում և պատշաճ լուսաբանություն են գտնում Հովհաննէս Երզնկացու «Քերականության» մեջ: Այս «Քերականությունը» Ն. Ադոնցը համարում է ամփոփումը այն բոլորի, ինչ կատարվել է հայ քերականագիտության մեջ նրանից առաջ և սկզբնաղբյուր՝ այդ գիտության հետագա կյանքի համար հաջորդող դարերում: Իր

17 Գ. Ջարրհանալեան, Հայկական հին դպրութիւն (Դ—ԺԳ), էջ 322:

18 Н. Адоиц, նշվ. աշխ., էջ LXXVI:

19 Նույն տեղում, էջ LXXIV:

20 «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 80—81:

21 «Սամուէլի բահանայի Անեցու Հաւաքմունք ի գրոց պատմադրաց», Վտղարշապատ, 1893, էջ 89: Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ LXXVIII, ծան. 4:

22 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 28—29, 38: Տե՛ս Н. Адоиц, նշվ. աշխ., էջ LXXVIII, ծան. 5:

23 Н. Адоиц, նշվ. աշխ., էջ L, ծան. 1:

«Քերականության» ներածության մեջ Հովհաննես Երզնկացին հանրագումարի է բերում ոչ միայն փաստական նյութը, այլև հաղորդում է պատմագրական բարձրարժեք տեղեկություններ՝ Այսպես, օրինակ. «Զի հմուտն իմաստութեան Մագիստրոս իշխանն, աշխատեալ ի սմա, եւ երեք մեկնչաց բանս առ միմեանս իղեալ՝ զԴաւթի փիլիսոփայի եւ զՄովսէսի քերթողի եւ զմիւս իմաստնոյ, որոջ ոչ էր գրեալ անունն. արարեալ եւ ինքն յաւելուած բանից յինքենէ։ ...էին եւ այլ մեկնիչք որք ոչ էին հանդիպեալ նմա»։ Այնուհետեւ Հովհաննես Երզնկացին շարունակում է. «Բսկ մեր ժամանակաւ տարեալ հոգք ժողովել զմեկնութիւնս քերականին եւ գտաք առանձնակի զամենեցունց արարեալսն եւ եղեալ ի մի գիրք։ Զոր ուսումնասէր պարոնն Յոհաննէս, ...գտեալ ուրեք աւրինակս հին եւ տուեալ փոխել, յորում էր Դաւթի փիլիսոփային եւ Մովսէսի քերթողին եւ այլ գ մեկնիչս առանց անուան մեկնողին»²⁴։ Քերական Հովհաննես Երզնկացին որոշակիորեն հաստատում է, որ ուսումնասեր պարոն Հովհաննես Երզնկացին իրեն տրամադրել է Դավթի, Մովսէսի և մի երրորդ՝ Անանուն մեկնիչի քերականական աշխատությունները, որոնցից օգտվել է նաև Գրիգոր Մագիստրոսը իր քերականությունը կազմելիս։

Իր «Մեկնության» սկզբից Հովհաննես Երզնկացին բերում է «եռամեծ Դաւթի փիլիսոփայի» «Մեկնութիւն քերականինի» «Նախերգանը», նշելով. «Եթէ ի՞ր աղագաւ բազում փոյթ յանձին կալեալ եղիւ վասն Քերականութեանս՝ ուսանիմք ի բանից Նախերգանի եռամեծին Դաւթի փիլիսոփայի, որ ասէ. յերկուց իմն պատճառէ մարդոյս գոյացեալ հաստատեցաւ բնութիւն»²⁵։ «Նախերգանի» վերջում Հովհաննես Երզնկացին նորից հիշատակում է «եռամեծ Դաւթին»։ «Այսոքիկ ըստ եռամեծին Դաւթի»²⁶։

Ըստ Ն. Ադոնցի, նշված հեղինակները՝ Դավթը, Մովսէսն ու Անանունը և զրականության այն շրջանը, որին պատկանում են նրանք, մինչև այժմ որոշ առումով հանելուկային են մնում։ Այժմ կարող ենք համոզված լինել, որ ունենք աւանդարկելիորեն Դավթին, Մովսէսին և Ստեփանոսին (նկատի ունի Ստեփանոս Սյունեցուն) պատկանող տեքստեր, որոնք որոշ անուններից մըշուշը ցրելու համար կարող են ավելի հուսալի հենարան դառնալ, քան դրական այլ հուշարձաններ։

Ն. Ադոնցը հաստատում է, որ քերականական մեկնությունների վերականգնումով արդարանում են նաև մատենագրության մէջ առկա վերոհիշյալ բոլոր տեղեկությունները։ Դրանք Դավթի, Մովսէսի և Ստեփանոսի գրած՝ Թրակացու աշխատության քերականական մեկնություններն են։ Մատենագրական սկզբնաղբյուրներում Դավթի և Մովսէսի հետ հիշատակվում է նաև Սամբրե Վերծանողը՝ որպես նրանց ընկերակից։ Ադոնցը ենթադրում է, որ Հովհաննես Երզնկացու հիշատակած Անանունը պետք է լինի Սամբրե Վերծանողը²⁷։

Ինչպես նկատելի է, Ադոնցը այստեղ հետևողական չլինելով, հենվում է առասպելական համարված ավանդության տվյալների վրա։ Եթե Անանուն

²⁴ Նույն տեղում, էջ LXXXVII—LXXXIX։

²⁵ Նույն տեղում, էջ 79, ծան.։

²⁶ Նույն տեղում, էջ 83, ծան.։

²⁷ Նույն տեղում, էջ CXIII։

մեկնիչին նա նույնացնում է ավանդության համաձայն Մովսես Խորենացու և Դավիթ Անհաղթի ընկերակից համարված Մամբրե Վերժանողի հետ, ապա Դավթի ու Մովսեսի անունով պահպանված քերականական մեկնություններն էլ նա պետք է ընդուներ որպես Դավիթ Անհաղթի ու Մովսես Խորենացու մեկնություններ:

Գրիգոր Մազիստրոսի և Հովհաննես Երզնկացու «Մեկնությունների» վերլուծությունը Ադոնցին բերում է այն համոզման, որ մինչև Մազիստրոսը գոյություն են ունեցել քերականական մի շարք աշխատություններ, հետևյալ անուններով և դրանց համապատասխան տեքստերով. Դիոնիսիոս, Դավիթ, Անանուն-Մամբրե, Մովսես, Ստեփանոս, Համամ և Մազիստրոս:

Վերականգնված տեքստերի վերլուծության մեջ Ադոնցը հիմնականում կանգ է առնում Դավիթ Փիլիսոփայի «Մեկնության» վրա, նկատի ունենալով, որ հետագա դարերի հայ մեկնիչ-քերականներն իրենց բացատրություններում հիմնվել են Դավթի «Մեկնության» վրա, հաճախ չիմանալով նույնիսկ Խրական «Քերականության» մասին:

Ադոնցը նշում է, որ հունարան դպրոցի քերականական երկերի ժամանակագրության ճշտումը կարևոր նշանակություն ունի այս ուղղության սկզբնավորության ժամանակը որոշելու համար: Սակայն քերականական երկերը այդ հարցի լուծմանը կնպաստեն այն դեպքում, եթե դրանք ուսումնասիրվեն հունարան դպրոցի այլ երկերի համեմատությամբ: Այդ նպատակով նա Դավթի «Մեկնությունը» վերլուծելիս հաճախ զուգադրում է այս և «Սահմանք իմաստասիրության», երբեմն նաև «Վերլուծություն ներածութեանն Պորփիրի» աշխատությունների մեջ հանդիպող նույն բացատրություններն ու տերմինները: Այդ համեմատությունների ընթացքում Դավթի երկերի մեջ բացահայտվում են բազմաթիվ ընդհանրություններ. երկու աշխատություններում էլ հանդիպում են բառացիորեն նույն ըմբռնումները: Այդ բոլոր ընդհանրությունները նկատելուց հետո, Ն. Ադոնցը եզրակացնում է, որ «երկու թարգմանություններն էլ²⁸ բացի նշված բառից (նկատի ունի *χατὰ γένος* բառը—Ա. Մ.), մնացած ամեն ինչում համընկնում են, մի հանգամանք, որը նշում է նրանց նույն գրական դպրոցից ծագած լինելը»²⁹:

Ինչպես նկատելի է, Ադոնցը այդ ընդհանրությունները վերագրում է ոչ թե նույն հեղինակին, այլ նույն գրական դպրոցին:

Տեսնենք այդ երկու երկերի մեջ եղած ընդհանրությունները:

Քերականության մեկնության «նախերգանում», նախքան արվեստի սահմանմանն անցնելը, Դավիթը բացատրում է «սահմանումը»: Որպես օրինակ նա բերում է «մարդու» սահմանումը, որին մի քիչ ավելի ընդարձակ հանդիպում ենք նաև «Սահմանք իմաստասիրութեան» գրքում: Վերջին աշխատությունը, ինչպես նկատելի է, Դավիթը գրել է ավելի ուշ, քան «Մեկնություն քերականինը»: Այսպես.

²⁸ «Սահմանք իմաստասիրությանը» Ն. Ադոնցը համարում է հունարենից թարգմանություն, իսկ «Մեկնություն քերականինն» էլ նախապես ենթադրում է, որ «Սահմանքի» նման կարող է թարգմանություն լինել հունարենից, այնուհետև ավելի հավանական է գտնում այն հայ հեղինակի գործ համարել:

²⁹ И. Адо́нц, *Указ.* աշխ., էջ CLXXXIX.

«եթէ ասիցի, որ, զինչ է մարդ, լիով պատասխանեալ ասէ. «կենդանի բանաւոր, մահկանացու»³⁰:

«Մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հսկմաւոր ընդունակ»³¹:

Այնուհետեւ Դավիթը բերում է «արվեստի» սահմանումը ըստ Թրակացու քերականության «Հավելվածի»: Այս սահմանման մեջ հուն. *χαρακτηρίζεται* բառը Դավիթը ոչ ճիշտ կերպով թարգմանել է «ի թողմանէ»: Այդ հարցին կանգնողանք հետո: Արվեստի նույն սահմանմանը, նշված բառի ճիշտ թարգմանությամբ, հանդիպում ենք նաև «Սահմանքի» մեջ.

«Արուեստ է բաղկացուրին, ի բողմանէ նախկերեալ, առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղումս» (Մ ե կ ն. ք ե բ., 80):

«Արուեստ է բաղկացուրին ի հասոցութենէ ներհմտութեամբ նախկերեալ առ պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումս» (Ս ա հ մ., 104):

«Մեկնության» մեջ Դավիթը մարդկային բնությունը բաժանում է երկու մասի՝ «բանական ոգու» և «գործնական մարմնի», որովհետև բոլոր գիտելիքները հանգում են դրանց՝ տեսականին և գործնականին: Արվեստները եւ նա համապատասխանաբար բաժանում է բանականի և գործնականի: Նույն միտքը նա հայտնում է «Սահմանքի» մեջ, իմաստասիրությունն ու արհեստները բաժանելով տեսականի ու գործնականի.

«Քանզի բնութիւն մարդոյս յերկուց բաղկացեալ զոյացաւ, յոգոյն բանականէ եւ ի մարմնոյն գործականէ. քանզի բոլոր գիտ իմաստից յայսոսիկ յանգեալ զաղարեաց, ի տեսականն եւ ի գործականն» Մ ե կ ն. ք ե բ., 79):

«Յարուեստիցն ոմն է կայուն և ոմն անցական, ոմն հասարակաց և ոմն առանձին: Բանականիս կայուն եւ հասարակաց՝ գիրք, եւ անցականն... իսկ գործականին հասարակաց եւ կայուն...» (Մ ե կ ն. ք ե բ., 80):

«Վասն այնորիկ իմաստասիրութիւն ի տեսականն և ի գործականն բաժանեցաւ, վասնզի էականցեալ է ի մեզ տեսականն և գործականն» (Ս ա հ մ., 116):

«Ոչ միայն իմաստասիրութիւն է տեսական և գործական, այլ և այլ արհեստքոն տեսական և գործական (Ս ա հ մ., 154):

Վասն այսորիկ և իմաստասիրութիւն յերկուս բաժանեցաւ՝ ի տեսականն և ի գործականն, որպէս զի ի ձեռն տեսականին զգիտական զօրութիւնսն հոգոյն զարդարեսցէ, իսկ ի ձեռն գործականին՝ զկենդանականն» (Ս ա հ մ., 118):

Դավիթը «Մեկնության» մեջ բանական և գործնական «արվեստների» կամ «արհեստների» մեջ տարբերում է «բարի», «չար» և «միջակ» դրսևորումներ: Ի տարբերություն Թրակացու և նրա հույն մեկնիչների, Դավիթը առաջ է քաշում նաև «արվեստների» հասարակական օգտակարության սկզբունքը, տարբերելով օգտակար ու պիտանի և վնասակար «արվեստներ»: «Սահմանքի» մեջ նույնպէս, մեկնաբանելով «արուեստի» սահմանումը, նա բացատրում է, որ արվեստի նպատակն է կյանքում որևէ օգտակար բան կատարելը: Նա տարբերում է «օգտակար արվեստները» «ունայն» և «չար արվեստներից», որոնց նպատակը կյանքում որևէ օգտակար գործ կատարելը չէ:

«Բանականիս, որ է բարի, բնաբարն առաքինութեամբ գիրք ինչ (ստեղծանել) հոգեւոր եւ նրգբ, իսկ շարին՝ թուլութիւնք եւ դիւստութեանց եւ շարարուեստութեանց, որք ոչ

«Իսկ առ ինչ պիտանի կատարումն, որ ի կենցաղումս ասացաւ, վասն ընդունայն արուեստութեանց եւ շարարուեստութեանց, որք ոչ

30 Դավիթի փոխառութիւն «Մեկնութիւնք քերականին», տես II. А Д О Н Ц, նշվ. աշխ., էջ 80 (այսուհետեւ կնշվի տեքստում՝ Մ ե կ ն. ք ե բ. կրճատ ձևով):

31 Դ ա լ ի Թ Ա ն յ ա ղ թ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1967, էջ 32 (այսուհետեւ կնշվի տեքստում՝ Ս ա հ մ. կրճատ ձևով):

թութիւնք եւ կախարդութիւնք, իսկ միջակին՝ մրմունջք, պարք եւ որ ինչ միանգամ այսմ հետեւին: Այսոքիկ բանականին գործառնութիւնք: Իսկ գործականին՝ ազտակարգ յարմեստից եւ պիտանացոյց, որպէս հիւանդութիւնք եւ դարբնութիւնք եւ նմանողք սոցա: Իսկ շարին՝ դեղք մահաբերք եւ որք հետեւին այնմ: Իսկ միջակին՝ աղեղնաւորութիւն եւ գեղարդնաւոր լինել» (Մ ե կ ն. ք ե ր., 79—80):

«Մեկնության» մեջ Դավիթը բանական արվեստներից միջակին հատուկ է համարում «մրմունջքը»: «Սահմանքի» մեջ նա նույնպէս հիշում է «մրմունջքը», այն կապելով երաժշտության հետ.

«Իսկ միջակին՝ մրմունջք, պարք եւ որ ինչ միանգամ այսմ հետեւին» (Մ ե կ ն. ք ե ր., 79):

ունին պիտանի կատարումն ի կենցաղումս: Եւ են ընդունայն արհեստութիւնք՝ լարախաղացութիւն, ձողախաղացութիւն, որք ոչ օգտեցուցանեն զկենցաղս և ոչ վնասեն: Իսկ շարաւեստութիւն է կախարդութիւն եւ դիւրութիւն, որ ոչ միայն ոչ օգտեցուցանեն զկենցաղս, այլ եւ վնասեն» (Ս ա հ մ., 104):

«Մեծ է զօրութիւն երաժշտականին, ...որպէս յայտ առնեն մրմունջք և ողբք, ըստ ինքեանց տրամադրելով զհոգին» (Ս ա հ մ., 134):

Թե՛ «Մեկնության» և թե՛ «Սահմանքի» մեջ Դավիթը «քերդողական արուեստը» համարում է երաժշտությունից առաջացած:

«Բայց սկիզբն առեալ քերդողականիս յառաջ գալոյ յերաժշտականէ անտի, վասն զի բնաւորեցաւ երկայնիւք եւ սղիւք յիւրն վարիլ նուագաւոր երգս. եւ ապա բազմաց մարդկան ի մէջ առեալ զքերդողականսն» (Մ ե կ ն. ք ե ր., 82):

«Եւ դարձեալ, քերքողն առնու խոստովանաբար, եթէ էն և ովն բնութեամբ երկարք են, իսկ զպատճառսն երաժշտական իմաստասէրն գիտէ» (Ս ա հ մ., 52):

«Քերքողն գիտէ, թէ էն և ովն բնութեամբ երկարք են. թէպէտ և զպատճառսն ոչ գիտէ, այլ վերածգէ յերաժշտական իմաստասէրն» (Ս ա հ մ., 92):

«Մեկնության» մեջ Դավիթը նշում է, որ քերդողները ձայնը սահմանում են որպէս «վիրաւորութիւն աւդոյ», իսկ «Սահմանքի» մեջ ավելացնում է, որ իմաստասերներն այն ուղղում են.

«Եւ ասացին զձայն վիրաւորութիւն աւդոյ, աւրինակաւ զխիստ ինչ ընդ իրեարս բաղխելով, զի վիրաւորեալ աւդն ի միջոցին տացէ ձայն. իսկ անգայտն եւ կակուղն ոչ տացէ զհնչումն» (Մ ե կ ն. ք ե ր., 82):

«Քանզի քերդողք ի սահմանելն զձայն՝ վիրաւորութիւն օդոյ ասացին, զորս վերստին ուղղէ իմաստասէրն, ասելով՝ թէ յոռի է սահմանդ, վասն զի ոչ զուգադարձի. վասն զի որ ձայն է՝ նա և վիրաւորութիւն օդոյ այլ ոչ որ ինչ վիրաւորութիւն օդոյ, այն ինչ և ձայն» (Ս ա հ մ., 96—98):

Ե՛վ «Մեկնության», և՛ «Սահմանքի» մեջ Դավիթը ձայնի բնության ուսումնասիրությունը համարում է իմաստասիրության առարկա.

«Ձայնի բնութիւն գտանել իմաստասիրաց է» (Մ ե կ ն. ք ե ր., 83):

«Եւ դարձեալ, իմաստասիրութիւն գիտէ զբնութիւնս ձայնից, իսկ զհետեւումնս ձայնի ետ գիտել քերթողին, այսինքն զոլորակս և զհաղագս» (Ս ա հ մ., 94):

Թրակացին «քերականությունը» սահմանում է որպէս արձակագիրների և բանաստեղծների մոտ ամենից ավելի հաճախ հանդիպածի հմտությունը: Հետագայում «Սահմանքի» մեջ Դավիթն այս բառը թարգմանում է ներմտություն, այն տարբերելով «հմտությունից»: Այդ նշանակում է, որ Թրակացու Քերականության թարգմանության և մեկնության ժամանակ Դա-

վիթը դեռևս տարբերություն չի դրել *πεῖρα* «համտութիւն» և *ἐμπειρία* «ներհամտութիւն» տերմինների միջև:

Դավիթը դեմ է քերականությունը որպէս «համտություն» սահմանելուն ու առաջ է քաշում արվեստի մեջ «բանականության» դերը: «Մեկնության» մեջ նա բացատրում է «համտութիւն» ու «բանաւորութիւն» հասկացությունները, իսկ «Սահմանքի» մեջ, ամբողջացնելով իմացության աստիճանները, նա տարբերում է «համտութիւն», «ներհամտութիւն», «արհեստ» և «մակացութիւն» հասկացությունները, որոնք իրարից տարբերվում են ընդհանրացման և պատճառների գիտության կարողության մբ:

«Քերականութիւն է հմտութիւն որք ի քերդողաց եւ ի շարագրաց իբրու բազում անգամ ասացելոց: Եւ արդ զի նախակարգեաց զսկիզբն արուեստիս ի հմտութենէ, թուեցաւ ոմանց յանբանութիւն ածեալ փոխանակ առաւելալ գիտութեան: Այլ նա ճշմարտիւ զոր ինչ եգիտն եւ կարգեաց ի հմտութենէ եւ ի բանաւորութենէ» (Մեկն. քեր., 83—84):

«Եւ է հմտութիւն այսպիսի ինչ. հարցեալ ցբեզ բայ եւ կամ անուն եւ քո ոչ կարացեալ ըստ արժանւոյն պատասխանել ի նախնեացն անկար սովորութիւն ըստ նմանութեան երթալոյ անասնոցն ի սովորական տեղիսն: Իսկ բանաւորութեամբ լուծանել զինդիրն ըստ նշանաւոր հրամանաց ի լսելոյ մարդոյ ստուգելով զբազում անգամ ասացեալսն քերդողաց եւ շարագրաց, այլ ոչ զաւտար ինչ որ ոչ լսի բան» (Մեկն. քեր., 84):

«Դիտութիւն կամ ընդհանուր է կամ մասնական, կամ հանդերձ պատճառաւ կամ առանց պատճառի, յորոց լինին շորքս այսոքիկ. հմտութիւն, ներհմտութիւն, արհեստ, մակացութիւն» (Սահմ., 102):

«Հմտութիւն է միոյ իրի անպատճառ գիտութիւն. որպէս յորժամ մի գեղ գիտելով, այնմ միայն պիտանանայ, ոչ գիտելով զպատճառսն, թէ որպէս պարտ է պիտանանալ նմա: ...Իսկ ներհմտութիւն է ընդհանուր անպատճառ գիտութիւն. որպէս այնք, որք ի ներհրմատականաց բժշկաց են, որք բազում ղեղս գիտելով՝ անգիտանան զպատճառս ներգործութեան դեղոցն: ...Իսկ արհեստ է ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ, կամ արուեստ է ունակութիւն ճանապարհորդեալ հանդերձ երեւակայութեամբ: ...Իսկ մակացութիւն է ընդհանուր անսխալ և անփոփոխելի գիտութիւն, քանզի անսխալաբար գիտէ զգիտելիսն» (Սահմ., 102—104):

Թե՛ «Մեկնության» և թե՛ «Սահմանքի» մեջ Դավիթը հիշատակում է ճարտասանության ընդունված երեք տեսակները.

«Տեսակք ճարտասանականին երիւք այսոքիւք կատարին եւ վարին՝ առեւակաւնաւ եւ բաղխոհականաւ եւ կացրդականաւ, զուգահաւասար հատեալք ի սեռէ» (Մեկն. քեր., 84):

«Ճարտասանականն սեռ գոլով յերիս բաժանի տեսակս. յատեւականն, ի բաղխոհականն, ի կացրդականն» (Սահմ., 144):

Դավիթը «Մեկնության» մեջ ստուգաբանության իր տեսությունն է մշակում, տարբերելով ստուգաբանության երեք տեսակ և զգուշացնում է, որ այն գտնելը բոլորին հատուկ չէ, այլ «խոհեմագուլններին»: Նա առաջ է քաշում նաև ստուգաբանության երկրորդ եղանակը՝ բառի կազմիչ տարրերի, հատկապէս բաղաձայնների փոփոխության միջոցով, օգտվելով լծորդությունների և կրկնակ բաղաձայնների ուսմունքից:

Առաջին եղանակի՝ բառի՝ իր բաղադրիչ մասերի բաժանման միջոցով ստուգաբանությունների հաճախ կարելի է հանդիպել Դավթի ինչպէս քերականության մեկնության, այնպէս էլ մյուս երկերի մեջ.

«Ստուգաբանութեան ձեւք են երեք, յիրէն, յարուեստէն, ի ձայնէն: Եւ յարացոյց առաջնումն սափոր, եւ հրկրորդին փսլտնատ, եւ երրորդին նննդով: Բայց ոչ ամենեցուն է

«Իմաստասիրութիւն... անուանի յանուանութենէ, այսինքն ի ստուգաբանութենէ, զսահմանն զայն, որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան» (Սահմ., 52):

զիւտս այս, այլ խոհեմագունիցն եւ իթ» - «Վեցերորդ սահման իմաստասիրութեան ի (Մ ե կ ն. ք ե ր., 85):

«Եւ վերծանութիւն³² ասի ընթերցումն, այլ ընթերցումն է, որ ասեն՝ իմաստասիրութեան իմաստասէրքն վերստին նախաւել (Ս ա հ մ., 58):

Հոգւոյ զմոռացումն իմաստից արինապաւ զիւտի ծառային» (Մ ե կ ն. ք ե ր., 85):

Ն. Ադոնցն այս առիթով, նույն էջի տարբերակներում, բերում է նաև Եսայի Նշեցու վկայությունը, որն ավելի է ընդգծում ստուգաբանությունը.

«Իսկ վերծանութիւն ասէ ըստ յունաց զընթերցումն ըստ մերումս եւ ստուգաբանի վերստին ծանել ըստ հոգւոյ զմոռացումն իմաստից» (Մ ե կ ն. ք ե ր., 85, տարբերակ):

Ինչպես «Մեկնություն», այնպես էլ «Սահմանքի» մեջ քերականությունը համարվում է բանավոր արվեստների սկիզբն ու նախագուռը.

«Եւ զի նախակարգէ զվերծանութիւն քերականաց եւ ապա շարադրաց. նախ՝ զի ամենայն արուեստաւոր զիրն կամի յարգուն ցուցանել. երկրորդ զի նախադուռն իսկ եւ սկիզբն բանաւոր արուեստիս զիրեանցն ասեն ինեւ ֆերդոֆն» (Մ ե կ ն. ք ե ր., 87):

Դավիթը մեկնաբանելով «Իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք» հատվածը, մտքի սխալ տրոհումը համեմատում է վատ խոհարարի՝ կենդանու հողերը սխալ անդամահատելու հետ. այդ բնորոշ օրինակը կա նաև Պորփյուրի «Ներածություն» վերլուծության մեջ:

«Իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք, այսինքն, յորոշելոյ զբանսն եւ զատանելոյ: Իսկ ոչ ուղիղ տրոհելն ըստ շար խոհակերի զանդամսն ոչ ուղիղ յաւելլ, որ է զմիտսն ի մտաց եւ զբան ի բանէ ոչ զատուցանել» (Մ ե կ ն. ք ե ր., 88):

«Մեկնություն» մեջ Դավիթը «քնարական քերթությունը» համարում է փիլիսոփայության մաս, ազգակից՝ մաթեմատիկական գիտություններին: «Սահմանքի» մեջ «քնարական քերթությունը» փոխարինվում է «երաժշտությամբ», որը մաս է կազմում ուսումնականի՝ մաթեմատիկայի, վերջինս էլ՝ փիլիսոփայության.

«Իսկ ասելն զֆնաւական ֆերդութիւն(ս)ն, որ է մասն իմաստասիրութեան, ըստ աստեղադիտութեան, ըստ երկրաչափականի, ըստ կարգ, ըստ համեմատութեան այսց շորից տեսական քանակի՝ շորս ունի եւ ուսումնականն, որ քանակին գոյանայ, զքուականն,

³² Ըստ Թրակացու սահմանման, «Վերծանութիւն է քերդածաց կամ շարադրածաց անվթար յառաջբերութիւն». «Վերծանութիւն ներկուտ ըստ առողանութեան» (Н. Адопц. նշվ. աշխ., էջ 1—2). այսինքն՝ վերծանությունը զեղարվեստական երկի՝ բանաստեղծության կամ արձակի՝ առողանության կանոնների համաձայն ճիշտ եւ արտահայտիչ արտաբերությունն է: Դավիթ մեկնության մեջ տարբերվում են վերծանության՝ քերականների ու իմաստասերների սահմանումները եւ ստուգաբանվում է իմաստասերների սահմանումը:

³³ Դավիթ Անյաղթ, Մեկնությունք ի վերլուծական Արիստոտելի, Երևան, 1967, էջ 42:

³⁴ Н. Адопц. նշվ. աշխ., էջ CXLI, ծան. 1:

քուականին ունի հանգամանս, զի զղաշնակումն ձայնին, զոտինն եւ զաղւոյն ի ներքս ի յիրսն համանման եւ ոչ աւտարս բերիցէ» (Մ և Կ ն. ք ե ր., 90):

Խոսելով լայի ժամանակի մասին Դավիթը երկու աշխատություններում էլ նշում է բայի երեք ժամանակները.

«Ամանակ հաւաստեալ երեք. ներկայ, անցեալ, ապառնի» (Մ և Կ ն. ք ե ր., 113): «Քանզի ոչ ունիմք ասել՝ եթէ բանականն յանցեալ ժամանակի, և անբանն ի ներկայում կամ յապառնուցն» (Մ ա հ մ., 146):

«Մեկնության» մեջ Դավիթը քննում է այն հարցը, թե ինչ է ժամանակը, այն «գոյություն ունեցողներից» է, թե՞ «գոյություն չունեցողներից» և բերում է երկու հակադիր կարծիք: Արիստոտելը ժամանակը համարում է գոյություն չունեցողներից, ինչպես «յուշկապարիկները»: Ն. Ադոնցը Արիստոտելի կարծիքի հետ համեմատում է «Սահմանքի» մեջ Դավթի բերած «եղջերուաքաղի» օրինակը.

«Դարձեալ հարցաւ յոմանց թե զի՞նչ իցէ ժամանակն, ի գոյից թե յոչ գոյից: ...Իսկ Արիստոտելէս ասաց՝ յոչ գոյից, որպիսի յուշկապարկացն համբաւ անուամբ միայն եւ ոչ ճշմարտութեամբ» (Մ և Կ ն. ք ե ր., 113): «Քանզի չիրողութեանցն ոմանք անգայք են, որպէս եղջերուաքաղն և արալէզն, և որչափ ինչ մերս վերաստեղծէ մտածութիւն» (Մ ա հ մ., 2):

Ադոնցը հարցում նույնպես նկատելի է «Մեկնության» և «Սահմանքի» մեջ Դավթի բացատրությունների ընդհանրությունը.

«Այլ ևս այս իսկ ի հայումս ի վախճանի բոստ երիցս այսոցիկ արիւնակացս իրր թե ձիւն, կամ ձիւղ, կամ ձիւ, որ նշանակիչ յայտնի իրաց է. զի ասիցես՝ ձի եկն, ոչինչ նշանակեցեր, իսկ զնկով ի վերայ զաւղն, իրր թե ասիցիս՝ ձիւն եկն, անդէն ծանուցեր» (Մ և Կ ն. ք ե ր., 115): «Ոչ թէ զհաղորդութիւն էականն նշանակէ յօղդ. այլ զնախագիտութիւն. քանզի յօղդ զվերետրիւն և զվերստին յիշումն նշանակէ, զոր յառաջագոյն գիտէր: Քանզի յորժամ ասեմք առանց յօղի, թէ այդ եկն, որպէս յասեմք անծանօթ իրի ասեմք. իսկ յորժամ ասեմք, թէ այդն եկն, զյառաջածանօթ իրս նշանակէ» (Մ ա հ մ., 64):

Ն. Ադոնցը հաճախ ընդհանրություններ է նկատում ոչ միայն «Մեկնության» և «Սահմանքի» միջև, այլև Դավթի Անհաղթի մյուս գործերի, ինչպես օրինակ՝ Պորփյուրի «Ներածության» վերլուծության մեջ: Դրանով առավել ևս հաստատվում է, որ քերականության մեկնիչը Դավթի Անհաղթն է.

Թրակացու քերականության երկրորդ բաժինը՝ Եփեսոս Դավիթը թարգմանել է «գրուցատրութիւն», որն այնքան էլ ճիշտ չէ: Այդ բառը նա շփոթել է ծելչչչչ-ի հետ, որը նշանակում է «գրուց», իսկ Եփեսոս նշանակում է «բացատրություն»: Դավթն իր «Մեկնության» մեջ կրկնում է այդ սխալը, «գրուցատրութիւն, գրուցել» բառերը նույնպես գործածելով Եփեսոս, Եփեսոս իմաստով: Ն. Ադոնցն այդ նկատելով, գրում է. «Ջրուցատրութիւն, գրուցել բառերը Դավթի շրթերում, ինչպես նշեցինք, նույնպես նշանակում են Եփեսոս, Եփեսոս»: Այս հիման վրա կարելի էր, թերևս, Դավթին մերձեցնել Դիոնիսիոսի թարգմանչի հետ: Բայց չի բացառվում սխալ բառագործածության մեջ ևղած նմանությունը Դավթի վրա հայերեն թարգմանության ազդեցությունամբ բացատրելը»:

«Զրուցատրուիւն» բառի նույն իմաստով գործածութիւնը և՛ թարգմանութիւն, և՛ մեկնութիւն մեջ ոչ թե Դավթի վրա հայերեն թարգմանութիւն ազդեցութիւն հետեանք կարող է լինել, այլ ապացուց է, որ թարգմանիչը և մեկնիչը նույն անձնավորութիւնն է: Մեր կարծիքով Դավթը գիտակցորեն քիչ-քիչ բառը, որի իմաստը նա չէր կարող չիմանալ, Թրակացու տեքստում բացատրութիւն թարգմանելու փոխարեն թարգմանել է զրուցատրութիւն, այն տարբերելու համար քերականութիւն հաջորդ՝ երրորդ մասից, որը նույնպէս ստիպւած էր թարգմանել բացատրութիւն՝ համապատասխան արտայայտման: Այսպէս. «Երկիր՝ զրուցատրութիւն ըստ ներգոյս քերականական յեղանակս. երիր՝ լեզուաց եւ հնագէտ պատմութեանց առձեռն բացատրութիւն»³⁶: «Մեկնութիւն» մեջ էլ Դավթը, պահպանելով իր թարգմանած զրուցատրութիւն, զրուցել բառերը, մեկնաբանում է Թրակացու բնագրի միտքը:

Անառարկելի է Ն. Ազոնցի նուրբ դիտողականութիւնը: Բանասիրական նման մանրախույզ աշխատանք կատարելուց, համեմատովող երկերի մեջ լեզվական բազմաթիւ ընդհանրութիւններ նկատելուց հետո, թվում էր, թե սուղիցիւր նա պիտի հայտարարեր, որ Թրակացու «Քերականութիւն» թարգմանիչը, մեկնիչ Դավթ փիլիսոփան և «Սահմանքի» հեղինակը նույն անձնավորութիւնը՝ Դավթ Անհաղթն է: Սակայն Ազոնցին նման եզրակացութիւն հանգելու համար խանգարել են մի քանի հանգամանքներ. նախ՝ նկատելով Դավթի «Մեկնութիւն» նմանութիւնը Թրակացու «Քերականութիւն» հունարեն մեկնութիւնների հետ, նա ենթադրում է թե արդյոք այն թարգմանութիւն չէ՞ հունարենից, ինչպէս «Սահմանք իմաստասիրութիւնը», որը, Ազոնցի կարծիքով, Դավթ անունով հույն հեղինակի գործի թարգմանութիւնն է: Արդյոք «Մեկնութիւն» էլ այդ նույն Դավթի գործը չէ՞: Սակայն նկատի ունենալով, որ մեկնիչ Դավթի կարծիքը ճարտասանութիւն բաժանման հարցում տարբերվում է «Սահմանքի» հեղինակի կարծիքից, Ազոնցը տարբերում է Դավթ քերականին փիլիսոփա Դավթից ու եզրակացնում, որ մեկնիչ Դավթ քերականը հայ է և նա իր «Մեկնութիւնը» կազմել է հունարեն սկզբնաղբյւրների, հավանաբար որեւէ դասագրքի, հիման վրա: Ինչպէս տեսնում ենք, Ազոնցը իր ուշադրութիւնը կենտրոնացնելով Դավթի «Մեկնութիւն»՝ Թրակացու հունարեն մեկնութիւնների հետ ունեցած նմանութիւն վրա, անտեսում է նախ՝ Թրակացու թարգմանութիւն մեջ թարգմանչի կատարած փոփոխութիւնները, որոնք մեծ մասամբ համընկնում են Դավթի «Մեկնութիւն» դրույթների հետ և ապացուցում են թարգմանչի ու մեկնիչի նույն անձնավորութիւնը լինելը: Երկրորդ՝ Ազոնցը թեև հաստատում է, որ «Մեկնութիւն» և «Սահմանքի» մեջ առկա են բազմաթիւ նմանութիւններ, սակայն, ոչ հիմնավոր պատճառաբանութիւններով, տարբերում է այդ երկերի հեղինակներին և Դավթ փիլիսոփայի «Մեկնութիւն քերականինը» վերագրում Դավթ Քերականին, մինչդեռ այդ «Մեկնութիւնը» «քերականական արվեստի» ավելի շատ փիլիսոփայական, քան քերականական վերլուծութիւն է: Եվ պատահական չէ, որ այդ «Մեկնութիւնը» հայ քերականութիւն պատմութիւն մեջ պահպանվել է Դավթ Փիլիսոփայի անունով: Դավթին էլ զրկելով ինքնուրույնութիւնից, Ազոն-

³⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Մուրադյան, Հունարեն դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանութիւն ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 174:

³⁷ Н. Азонц, նշվ. աշխ., էջ 1:

ցը նրա «Մեկնությունը» համարում է հունական սկզբնաղբյուրների հետևողությամբ կազմած գործ։

Ն. Ադոնցը դժվարանում է ճիշտ եզրակացությունների հանգել նաև այն պատճառով, որ Դավիթ Անհաղթի և Մովսես խորենացու ժամանակի մասին որոշակի պատկերացում չունի։ Ելակետ ունենալով Ստեփանոս Սյունեցու ժամանակը (վերջինս ապրել է VII դարի վերջում, VIII դարի առաջին կեսում), Ադոնցը դրում է. «Ստեփանոսի ժամանակը լավ հայտնի է։ Մովսեսը՝ նրա ուսուցիչը նրանից վաղ է, իսկ Անանունը և Դավիթը էլ ավելի վաղ են։ Սրանով մենք արդեն տեղափոխվում ենք VII դար, որի սահմաններում հավանաբար պիտի դրվի նշված քերականների ժամանակը»³⁸։

Այսպիսով, նկատելով հանդերձ, որ քերականական աշխատությունները հունաբան դպրոցի առաջին գործերից են, Ադոնցը նրանց հեղինակներին տեղափոխում է VII դար։ Մովսեսի անունով պահպանված մեկնությունը նա համարում է Ստեփանոս Սյունեցու ուսուցիչ Մովսես Քերթողինը։ Դավիթ Անհաղթից կամ Դավիթ Փիլիսոփայից ենթադրաբար նա տարբերում է մի Դավիթ Քերականի, որի մասին հայ մատենագրության պատմության մեջ Ադոնցից առաջ բացարձակապես ոչ մի տեղեկության չենք հանդիպում, իսկ Անանունին նույնացնելով խորենացու և Անհաղթի ընկերակից համարվող Մամբրե վերծանողի հետ՝ նրան նույնպես տանում է VII դար։

Մատենագրական տեղեկությունները՝ ձեռագրերի, պատմիչների, քերականների վկայությունները, որոնք դարեր շարունակ սերունդների էությունից կրկնվել են, Թրակացու «Քերականության» թարգմանությունն ու մեկնությունը վերագրել են «եռամեծ Դավիթ փիլիսոփային» կամ Դավիթ Անհաղթին։

Մեծագույն խնամքով հավաքած բոլոր տեղեկությունները և լեզվական իր բազմաթիվ դիտողություններն անտեսելով, Ադոնցը Թրակացու թարգմանչին, մեկնիչին և «Սահմանքի» հեղինակին տարբերում է մի քանի պատճառաբանություններով։ Թրակացու «Քերականության» հավելվածում «արվեստի» սահմանման մեջ գործածված *κατασκευα* բառը Թրակացու «Քերականության» և «Մեկնության» մեջ թարգմանված է «թողումն», իսկ «Սահմանքի» մեջ՝ «հասողություն»։ Ն. Ադոնցի կարծիքով, նույն անձը չէր կարող միևնույն բառը այսպիսի կարևոր սահմանման մեջ տարբեր կերպ թարգմանել։ Հետևաբար նա եզրակացնում է. «Թրակացու թարգմանիչն այլ անձնավորություն է, քան «Սահմանքի» թարգմանության հեղինակը։ Նշանակում է, *κατασκευα* բառի երկակի թարգմանությունը թույլատրում է երեք հեղինակի գոյությունը. մեկը՝ թարգմանել է «Սահմանքը», մյուսը՝ Թրակացուն, իսկ երրորդը նա է, որը Դիոնիսիոսի «Մեկնության» մեջ օգտվում է նշված բառի անճիշտ թարգմանությունից, առանց վերապահման»³⁹։

Հունարեն *κατασκευα* բառը *κατασκευα* բառից նշանակում է «հասողություն»՝ ըմբռնում, իսկ նույն բառը *κατασκευα* բառից՝ «թողումն»։ Նախ՝ եթե այդ բառը և՛ Թրակացու «Քերականության», և՛ «Մեկնության» մեջ թարգմանվել ու գործածվել է միևնույն իմաստով, նշանակում է, որ թարգմանիչն ու մեկնիչը նույն անձնավորությունն է՝ Դավիթը։ Երկրորդ՝ «Սահմանքը» ավելի ուշ շրջանի գործ է, քան Թրակացու «Քերականության» թարգմանությունը։ Եթե

³⁸ Н. Адонц, *Աշխ.* աշխ., էջ CXCHII։

³⁹ Նույն տեղում, էջ CLXXXIII։

«Թողումն»-ը, ըստ Ն. Ադոնցի, հունարեն բառի սխալ հասկանալու հետևանք է, ապա տրամաբանական է, որ «Սահմանքում» Դավիթն իր սխալը նկատեր և ուղղեր. այդպես էլ արել է: Եթե Դավիթը հակառակն արած լիներ՝ նախ ճիշտը դրեր, հետո՝ սխալը, այդ դեպքում կարող էինք մտածել, թե նույն անձը միևնույն բառը, այն էլ այդպիսի կարևոր սահմանման մեջ, երկու ձևով չէր թարգմանի, բայց տվյալ դեպքում հակասական ոչինչ չկա: Երրորդ՝ շատ հավանական է, որ Դավիթը նշված բառը «Քերականության» մեջ «Թողումն» է թարգմանել Թրակացու հույն մեկնիչների հետևողությամբ, որոնք նույն ձևով են հասկացել ու բացատրել այդ սահմանումը: Հետևաբար, այդ բառի երկակի թարգմանությունը հիմնավոր առարկություն չէ Թրակացու թարգմանչին, մեկնիչին և «Սահմանքի» հեղինակին տարբերելու համար:

Ն. Ադոնցի մյուս առարկությունն այն է, որ «Մեկնության» հեղինակը ճարտասանությունը երեք տեսակի՝ «ատենականի, բաղիսոհականի և կացըր-դականի» բաժանելուն կողմնակից է, իսկ «Սահմանքի» հեղինակը այդ բաժանումը համարում է «ոչ բարւոք»: «Հետևաբար,— գրում է Ադոնցը,— այդ բաժանմանը կողմնակից մեր Դավիթը չի կարող լինել ո՛չ «Սահմանքի» հեղինակ, ո՛չ էլ նրա թարգմանիչ»⁴⁰:

Նախ նշենք, որ Ն. Ադոնցը իրավացի չէ: «Սահմանքի» մեջ «ոչ բարւոք» է համարվում ոչ թե ճարտասանությունը երեք մասի բաժանելը, այլ ճարտասանության այնպիսի բաժանումը, ինչպիսին է բաժանումը սեռից տեսակի. «Առ որս ասասցուք, թէ ոչ է բարիոք բաժանումդ, և ոչ որպէս ի սեռէ ի տեսակս ասի բաժանիլ ճարտասանականն յայսոսիկ»⁴¹: Երկրորդ՝ «Մեկնության» մեջ Դավիթը տալիս է քերականական մեկնություններում ճանաչում գտած ճարտասանության բաժանումը, իսկ «Սահմանքի» մեջ՝ այդ հարցի շուրջը փիլիսոփաների վեճը: Երրորդ՝ եթե Դավիթն էլ վերագրենք այդ կարծիքի փոփոխությունը, այնուամենայնիվ, նա քարացած հայացքների տեր մեկը չէր և կարող էր ժամանակի ընթացքում իր կարծիքը փոխել: Հետևաբար «Քերականության» մեկնիչին «Սահմանքի» հեղինակից տարբերելու Ադոնցի այս առարկությունը ևս հիմնավոր չէ:

Ն. Ադոնցը ունի նաև լրացուցիչ եզրակացություններ, որոնցով տարբերում է Թրակացու «Քերականության» թարգմանչին և մեկնիչին: Դրանք են՝ դերանվան մասին Դավթի մեկնության տարբերությունը Թրակացու «Քերականությունից», «վանգ» և «փաղառութիւն» բառերի տարբերակումը Դավթի «Մեկնության» մեջ ոչ թե թարգմանչին, այլ Դիոնիսիոսին վերագրվելը, Թրակացու «Քերականության» մեջ հունարենի հինգ հոլովի դիմաց «Մեկնության» մեջ հայերենում վեցերորդ հոլովի ավելացնելը և այլն:

Հ. Մանանդյանն իր «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մեջ անդրադառնալով նույն հարցերին, հաստատում է Ադոնցի այն ենթադրությունը, որ «Մեկնության» հեղինակ Դավիթ փիլիսոփան հայ է: Նա նշում է, որ բացի Ադոնցի նկատած նշաններից, կան նաև ուրիշ ուշագրավ տվյալներ, որոնք ցույց են տալիս Դավթի «Մեկնության» ոչ թե թարգմանություն, այլ հայ հեղինակի գործ լինելը: Իբրև ասպացույց Հ. Մանանդյանը բերում է Ն. Ադոնցի նկատած մի քանի սխալ թարգմանությունները, որոնք ընդ-

⁴⁰ Նույն տեղում, էջ CXXXII—CXXXIII:

⁴¹ Դ ա Վ թ Ա ն չ ա ղ թ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 144:

հանուր են Թրակացու «Քերականության» թարգմանության և Դավթի «Մեկնության» մեջ. օրինակ՝ «արվեստի» սահմանման մեջ հանդիպող *ἄνευ* բառը, որը նշանակում է «հասողութիւն», և՛ Թրակացու «Քերականության», և՛ Դավթի «Մեկնության» մեջ թարգմանված է «թողումն»։ մակբայների տեսակների թվարկման մեջ *ἄνευ* բառը, որ նշանակում է «որակական», և՛ Թրակացու «Քերականության», և՛ Դավթի «Մեկնության» մեջ թարգմանված է «խեղութեան»։ Վերջին սխալը ն. Ադոնցը արգյունք է համարում Թրակացու թարգմանչի կողմից *ἄνευ* բառը իբր *ἄνευ* կարգալու նկատելով, որ նույն բառը Դավթի «Մեկնության» մեջ էլ կա, ն. Ադոնցը գրում է. «Դավթը ոչ միայն չի ուղղում ակամա սխալը, այլ աշխատում է բացատրել պատահական տերմինը ընդունելի իմաստով»⁴²։

«Քերականության, քերական» բառերը (ինչպես վերոհիշյալ «զրուցատրութիւն, զրուցել» բառերը) Դավթի մոտ ոչ թե ակամա սխալ են, այլ գիտակցված։ Այդ բառերի մասին Դավթի բացատրությունից երևում է, որ նա «քերականության» ասելով՝ հասկանում է «որակական», հետևաբար այդ բառերը ի՛նքն է թարգմանել, հետո էլ նույն ձևով մեկնել է⁴³։ Եվս մեկ ապացույց, որ Թրակացու «Քերականության» թարգմանիչը Դավթին է. Հ. Մանանդյանը ընդունելով, որ Դավթի փիլիսոփայի «Մեկնությունը» հայ քերականի աշխատություն է, ելրականում է. «Ուրեմն՝ որոշվում է հունաբան դպրոցի հայ մատենագիրներից գոնե մեկը, որը, ըստ երևույթին, այդ դպրոցի հայտնի դեմքերից է, ձեռագրերում էլ անվանվում է հաճախ «եռամեծն Դավթ փիլիսոփա»⁴⁴ ու հրդում է ն. Ադոնցի աշխատությանը՝ «Արուեստ Դիոնիսեայ», էջ 79, ծան.։

Մեզ համար կասկած չի հարուցում, որ «այս դպրոցի հայտնի դեմքերից» «եռամեծն Դավթ փիլիսոփան» Դավթ Անհաղթն է, սակայն այդ մասին ն. Ադոնցի ու Հ. Մանանդյանի մոտ որոշակիություն չի նկատվում։

Ինչպես ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը ևս ավանդությունը առասպել է համարում, սակայն դիմում է նրա վկայություններին։ Անանունի «Մեկնությունը», որը ն. Ադոնցը Մամբրե վերծանողին է վերագրում, Հ. Մանանդյանը, հենվելով Համամ Արևելցու «Մեկնութիւն քերականին» մի հատվածի վրա, հավանական է համարում վերագրել Դավթի ու Մովսեսի «նմանակից» Պողոսին. «Դավթը, ըստ երևույթին, քերականի մեկնության հեղինակ «եռամեծն Դավթ փիլիսոփան» է, իսկ Պողոսը, ամենայն հավանականությամբ, հեղինակն է մյուս հնագույն մեկնության։ Եթե այս ենթադրությունն ուղիղ համարվի, Անանունի մեկնությունը հավանական կլինի վերագրել ոչ թե Մամբրե վերծանողին, այլ Պողոս մեկնիչին, որը Մովսեսի ու Դավթի Հարցմունքներում հիշվում է իբրև «նմանակից» Դավթ փիլիսոփայի, Մովսես քերթողաօր, Աբրահամ հոգևորի և Մամբրե իմաստասերի»⁴⁵։ Ինչպես նկատելի է, թե՛ ն. Ադոնցը և թե՛ Հ. Մանանդյանը դժվարանում են հրաժարվել ավանդության տեղեկությունից։ Ինչպե՞ս կարող է Դավթ Անհաղթի ու Մովսես հորենացու մասին առասպել համարված ավանդությունը ճշմարիտ լինել Մամբրե վերծանողի ու նրանց «նմանակից» Պողոսի մասին, որոնք ապրել են V դարում և

42 Н. Адонц, *уշվ. աշխ.*, էջ CLXXIX:

43 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Դ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 59:

44 Հ. Մանանդյան, *уշվ. աշխ.*, էջ 211:

45 Նույն տեղում, էջ 213:

Սահակի ու Մեսրոպի աշակերտներն են։ Սակայն Հ. Մանանդյանն էլ, Ն. Աղոնցի նման, Պողոսին տանում է VII դար։

Քերականական մեկնությունների գրության ժամանակը Ն. Աղոնցը, ինչպես տեսանք, համարում է VII դարը։ Հ. Մանանդյանը իբր ավելի հիմնավոր ու հաստատուն կերպով է որոշում Դավիթ փիլիսոփայի ու Անանունի ժամանակը, այն դնելով հունաբան դպրոցի երկրորդ շերտի թարգմանություններից և 576 թ. հետո։ Իսկ Թրակացու «Քերականությունը», որը հունաբան թարգմանությունների առաջին խմբին է պատկանում, ըստ Հ. Մանանդյանի, թարգմանված պետք է լինի ամենաուշը VI դարի առաջին կեսում։ Հետևաբար նա էզրակացնում է. «Դավիթ փիլիսոփայի մեկնությունը և Թրակացու քերականության թարգմանությունը... ծագել են հունաբան դպրոցի զարգացման տարբեր շրջաններում։ Իսկ այս փաստից բխում է ինքնին, որ քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան չի կարող լինել Թրակացու քերականության թարգմանը»⁴⁶։

Հ. Մանանդյանը պատասխանում է նաև Ն. Աղոնցի առաջ քաշած այն հարցին, թե քերականի մեկնիչ Դավիթ փիլիսոփան կարո՞ղ է արդյոք «Սահմանք իմաստասիրութեան» երկի հեղինակը կամ թարգմանիչը լինել։ Ժամանակագրական տեսակետից նա միանգամայն հնարավոր է համարում «Սահմանքի» թարգմանությունը վերագրել քերականի մեկնիչ «եռամեծն Դավիթ փիլիսոփային», որովհետև նրանց երկուսի ժամանակն էլ դրվելու է հունաբան դպրոցի երկրորդ շերտի թարգմանություններից հետո։ Սակայն Հ. Մանանդյանը տարբերում է քերականի մեկնիչին «Սահմանքի» հեղինակից այն պատճառաբանությամբ, որ բացի Ն. Աղոնցի նշած՝ ճարտասանության տեսանկյանի բաժանման մասին կարծիքների տարբերությունից, «քերականի թե՛ ամբողջ մեկնությունն ըստ իր բովանդակության և թե՛ իմաստասիրական առանձին դատողությունները շունեն այն հմտության ու գիտության որականիշները, որոնք առանձնահատուկ են «Սահմանքի» հեղինակ Դավիթ մեկնիչին»⁴⁷։

Դժվար չէ նկատել, որ Հ. Մանանդյանի առարկությունները նույնպես հիմնավոր չեն Թրակացու թարգմանչին, քերականի մեկնիչին և «Սահմանքի» հեղինակին կամ թարգմանչին տարբերելու հարցում։ Այդ առարկությունները հիմնականում հենվում են հունաբան դպրոցի թարգմանությունների իր խմբավորման ժամանակագրության վրա, որն ունի հակասություններ, հետևաբար խոցելի է։

Այսպես, նա գրում է. «Արտաքին գրոց» թարգմանությունների հունաբան լեզվի ուսումնասիրությամբ հաջողվել է ինձ ստանալ լեզվական մի շարք ապացույցներ, որ Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, Փիլոնը և Պիտոյից զիրբը կաղմում են հունաբան թարգմանությունների հնագույն շերտը...։ Հայտնի է նաև, որ այդ թարգմանություններից (նկատի ունի Փիլոնի երկերը — Ա. Մ.) օգտվել են ոչ միայն Մամբրեն ու Մովսես Խորենացին, այլև Եղիշեն։ Ըստ այդմ Փիլոնի թարգմանության ժամանակը պետք է ենթադրել ոչ ուշ քան VI դարը»⁴⁸։ Հասկանալի է, որ Հ. Մանանդյանը Մամբրեի, Մովսես Խորենացու և Եղիշեի ժամանակի մասին սխալ կարծիքի է։ V դարում ապրած Մամբրեն, Խորենացին ու Եղիշեն ինչպե՞ս կարող էին VI դարում թարգմանված Փիլոնի

⁴⁶ Նույն տեղում, էջ 216։

⁴⁷ Նույն տեղում, էջ 218։

⁴⁸ Նույն տեղում, էջ 106։

երկերից օգտվել: Կամ նա դրում է. «Թե՛ Փիլոնի և թե՛ Պիտոյից գրքի թարգմանություններից օգտվել է, անտարակույս, նաև Մ. Խորենացին, սակայն այս հանգամանքը չի պարզում սրանց թարգմանության ժամանակը, որովհետև անորոշ ու վիճելի է նաև Խորենացու ժամանակը»⁴⁹: Մեզ համար այժմ պարզ է Խորենացու ժամանակը, հետևաբար այդ թարգմանություններն էլ պետք է դրվեն V դարի կեսերին: Հ. Մանանդյանը շարունակում է. «Վերոհիշյալ թարգմանությունները, իրենց բառամթերքով ու լեզվական առանձնահատկություններով, կազմում են հունաբան թարգմանությունների հատուկ մի խումբ և նրանց ժամանակը պետք է դնել Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանությունից առաջ, ուրեմն ոչ ուշ քան VI դարի առաջին կեսը»⁵⁰:

Հ. Մանանդյանին այս եզրակացության հանգելու համար հիմք են ծառայել լեզվական մի շարք համեմատություններ. նա գրում է. «Թրակացու քերականության մեջ հունաբան բառակազմությունը դեռևս հաստատուն չէ: Քերականական միևնույն եզրերը հայերենում շատ հաճախ թարգմանված են տարբեր բառերով և նույն բազմազանությունը նկատելի է նաև հունական նախադրությունների թարգմանության ժամանակ: ...Նրա մեջ հունական բարդ բառերի նախադրությունները շատ հաճախ կամ բնավ չեն թարգմանված կամ թարգմանված են Ոսկեդարյան գրաբարի հետևությամբ: Օրինակ, ἀναλογία համեմատութիւն Թր. 1 (էլ. Ստ. վերաբանութիւն էջ 50). διαλογισμός անջատական Թր. 35 (Դաւ. Պորփ. տարալուծական 343), διακρίνομαι ընտրիմ Թր. 23 (տարոտոշիմ Դ. Պորփ. 253), διαφοράς զանազան Թր. 19 (տարբերութիւն, տարբեր Տիմոթ. Հակաճ. 262)... և այլն: ...Թրակացու քերականության լեզվական այս առանձնահատկությունները՝ հունարեն բարդ բառերի թարգմանությունը Ոսկեդարյան գրաբարի բառերով կամ նրա կանոնների հետևողությամբ, թարգմանչի վարանումներն ու անվճռականությունը քերականական եզրերի ու նախդիրներով բարդված բառերի թարգմանության ժամանակ, նախդիրների թարգմանումը հայերեն տարբեր ու բազմազան նախադրություններով, այս բոլորը, իմ կարծիքով, Թրակացու թարգմանության հնության մի նշան է և բացատրովում է հունաբան որոշ ու հաստատուն բառամթերքի բացակայությամբ»⁵¹ (ընդգծումները մերն են—Ա. Մ.):

Եթե Հ. Մանանդյանը բազմաթիվ օրինակներով ապացուցում ու կրկնում է, որ Թրակացու քերականության մեջ հունարեն բարդ բառերի թարգմանությունը կատարվել է «ոսկեդարյան գրաբարի բառերով կամ նրա կանոնների հետևողությամբ», ինչպե՞ս կարող է այդ երկի թարգմանությունը փոխադրել VI դարի առաջին կեսը: Պատճառն այն է, որ եթե Ն. Ադոնցը հունաբան թարգմանությունների ժամանակը որոշելու համար հենվում է Ստեփանոս Սյունեցու ժամանակի վրա, ապա Հ. Մանանդյանն էլ հենվում է Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանության մասին ի՞ր առաջարկած ոչ ճիշտ ժամանակի վրա: Մյուս կողմից, Դավիթ Անհաղթին ու Մովսես Խորենացուն հեռացնելով իրենց ժամանակաշրջանից, նա ստիպված է մի շարք երկերի համար նոր թարգմանիչներ կամ մեկնիչներ որոնել, որոշ թարգմանություններ էլ փոխադրել VI կամ VII դար:

49 Նույն տեղում, էջ 106—107:

50 Նույն տեղում, էջ 107:

51 Նույն տեղում, էջ 119—122:

Հ. Մանանդյանի լեզվական վերոհիշյալ և բազմաթիվ այլ դիտողություններ ապացուցում են, որ Թրակացու «Քերականությունը» թարգմանվել է դասական հայերենից հունաբան հայերենին անցման շրջանում, V դարի կեսերին, ևրբ դեռ նոր էր ձևավորվում հունաբան հայերենը:

Գ. Ջահուկյանը իր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» գրքում հանգամանորեն ուսումնասիրել է Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանությունը և նրա հայերեն մեկնությունները V—XV դդ.: Այս աշխատության մեջ նա մանրամասնորեն քննում է Թրակացու «Քերականության» թարգմանության ժամանակը, թարգմանչի անձնավորությունը, թարգմանչի կողմից բնագրում կատարված փոփոխությունները, թարգմանության հունաբանություններն ու անքննադատ ընդօրինակումները, թարգմանության տերմինաբանությունը, մեկնիչների, հատկապես առաջին երեք մեկնիչների՝ Դավթի, Անանուն Մեկնիչի և Մովսես Քերթոզի ժամանակի ու անձնավորությունների հարցը և մեր նյութի հետ առնչվող բանասիրական ու լեզվական բազմաթիվ այլ հարցեր: Վերլուծելով Ն. Ադոնցի ու Հ. Մանանդյանի կարծիքները և առարկությունները մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, Դ. Ջահուկյանը համոզիչ փաստարկներով հաստատում է, որ ինչպես Թրակացու «Քերականության» թարգմանիչը, այնպես էլ մեկնիչ Դավթ Փիլիսոփան նույն անձնավորությունն է՝ Դավիթ Անհաղթը:

Համակարծիք լինելով նրա բոլոր փաստարկներին, մենք մեր հերթին աշխատեցինք ապացուցել նույն տեսակետը, որը պահպանել ու դարեր շարունակ ավանդել են հայ մատենագրական սկզբնաղբյուրները: Ն. Ադոնցն ու Հ. Մանանդյանը ավանդությունը առասպել համարելով, այն չփոխարինեցին այնպիսի հիմնավոր մի տեսակետով, որն անառարկելիորեն ընդունելի լիներ: Ընդհակառակն, ինչպես տեսանք, իրենք նույնպես դիմում են ավանդության տեղեկություններին:

Հոգվածի սահմաններում հնարավորություն չունենք ցույց տալու Թրակացու «Քերականության» հարաբերությունը հունաբան դպրոցի մյուս թարգմանությունների ու երկերի հետ, ինչպես՝ Արիստոտելի «Ստորոգութեանց մեկնութեան», Արիստոտելի «Յաղագս մեկնութեան», Դավթի «Վերլուծութիւն «նեբաժութեան» Պորփյուրի» աշխատությունների հետ, ինչպես նաև Դավթ փիլիսոփայի «Մեկնության» և Արիստոտելի «Յաղագս մեկնութեան», Յամելյախուսի «Ստորոգութեանց» և այլ երկերի միջև եղած ընդհանրությունները:

Լեզվական վերոհիշյալ դիտողությունները հիմք են տալիս պնդելու, որ ճիշտ են մատենագրական բոլոր այն տեղեկությունները, որոնք Դավթ Անհաղթին են վերագրում Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» երկի թարգմանությունն ու Դավթ Փիլիսոփայի «Մեկնութիւն քերականինը»: Նույնն են ապացուցում նաև բանասիրական դիտողությունները, որոնց համաձայն հունաբան դպրոցի հիմնադիրներ են համարվում Սահակի ու Մեսրոպի կրտսեր աշակերտներից շատերը, որոնք կոչվել են նաև «կրտսեր թարգմանիչներ»: Այդ թարգմանիչներից են՝ Մովսես Խորենացին, Դավթ Անհաղթը, Սամրե Վերծանողը, Աբրահամ Հռետորը և նրանց ընկերները, որոնք V դարի երկրորդ քառորդին հունական գիտական կենտրոններում, իրենց ուսումնառություն ընթացքում, ծանոթանալով անտիկ աշխարհի ուսման ծրագրին, սովորում են եռյակ գիտություններ՝ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն և ձեռնարկում են այդ գիտությունների վերաբերյալ դասա-

գրքերը թարգմանելու հայերենի Այդ դասագրքերն էին՝ Թրակացու «Քերականական արվեստը», Աֆտոնիոսի «Պիտոլից գիրքն» ու Թեոնի «Ճարտասանական վարժությունները» և Պորփյուրի «Ներածությունը»։ Այս գրքերից առաջին երկուսն իրենց լեզվական առանձնահատկություններով հունաբան ղրպորոգի հնագույն թարգմանություններն են։

Այսպիսով, Դավիթ Անհաղթը, լրնելով Թրակացու «Քերականության» թարգմանիչն ու հնագույն մեկնության մեկնիչը, հայ բերականության պատմության մեջ առաջին հայ բերականն է և հայ բերականական մտքի կազմավորողը, որովհետև այդ գիրքը երկար ժամանակ եղել է դպրոցական դասագիրք և հայ բերականները մոտ մեկ հազարամյակ նրա համար գրել են մեկնություններ։ Այդ «Քերականության» թարգմանության առիթով Դավիթ Անհաղթին է պատկանում նաև հայ բերականական տերմինաբանության ստեղծողի պատիվը, տերմինաբանություն, որի ղգալի մասը այսօր էլ անփոփոխ կերպով գործածվում է։

ПРОБЛЕМА ПЕРЕВОДЧИКА И ТОЛКОВАТЕЛЯ ГРАММАТИКИ ДИОНИСИЯ ФРАКИЙСКОГО

Кандидат филол. наук А. Н. МУРАДЯН

(Резюме)

Перевод на армянский язык Грамматики Дионисия и ее толкование древние и средневековые источники приписывают Давиду Непобедимому (Анахту). При анализе «Толкования грамматики» философа Давида Н. Адонц сравнивает этот труд с «Определениями философии» одноименного автора Давида и отмечает их большое сходство. Однако, основываясь на некоторых несущественных различиях в упомянутых работах, Адонц считает автором «Толкования» некоего Давида Грамматика, отличая его от автора «Определений» философа Давида и от переводчика Грамматики Дионисия. Вслед за Адонцем и А. Манандян принимает факт наличия трех разных авторов. Г. Джаукян же утверждает, что переводчиком и толкователем Грамматики Дионисия является Давид Анахт, отстаивая традиционное мнение, существовавшее в литературе до Н. Адонца и А. Манандяна. На основе языковых фактов, приведенных в трудах Адонца и Манандяна, а также собственных наблюдений мы показываем, что переводчиком и толкователем Грамматики Дионисия является Давид Анахт. Таким образом, знаменитый философ был также первым армянским грамматиком, сформировавшим армянскую грамматическую мысль и создавшим грамматическую терминологию, значительная часть которой употребляется и сегодня.